է. «Երբ կատարվեց իմ հրամանը, ապա երկնքից մի պայծառ ու ահեղ լույս իջավ նրա վրա, այնքան, որ արեգակի լույսը արգելվեց: Արդ, ես ձեզ ասում եմ, գրեցեք ձեր գրքերում կանոններ և անեծքով փակեցեք, որ երբ քրիստոնյաները մահմեդական դառնան և հետո վերադառնան իրենց հավատին, մի արգելեք կամ մի չարչարեք, այլ թույլ տվեք նրանց՝ մնան իրենց հավատին: Միգուցե սպանեք նրանց, և լույս իջնի նրանց վրա, և այս տեսնեն մահմեդականները և երկմտեն իրենց հավատի մեջ, և լինի մեծ պակասություն մեր ազգի համար: Երբ ձեզ մոտ գան, նրանց թույլտվության թուղթ տվեք իրենց հավատը պաշտելու, թող լինեն հավատուրաց և ձեզ հարկեր վճարեն»: Այս հրամանը կատարվում է մինչև այսօր: Երբ մեկը որևէ պատճառով մահմեդականանում է, գնում, առնում է արքունի հրամանագիր և գալով համարձակ պաշտում է իր հավատքը, իսկ մահմեդականներից ոչ ոք ոչինչ չի ասում: Իսկ մենք գնացինք Ղազվին քաղաքը 1124 (1675) թվին վանքի գործով, փարպեցի մահմեդականացած հինգ հայերի համար Շահ Սուլեյմանից առանք հրամանագիր: Եվ ահա նրանք քրիստոնեական հավատքի մեջ են և պաշտում են Քրիստոսին, ինչպես պաշտում են մյուս չմահմեդականացածները:

ԳԼՈՒԽ ԺԴ
ՉԻԵՐԻ ՉԱՐԴԵՐԻ ՄԱՍԻՆ

Կամենում եմ խոսել սույն Շահ Աբաս թագավորի մասին, քանզի չափազանց հնարամիտ և հույժ հանճարեղ գրավող էր մարդկանց սրտերը և իր գործերը անում էր մարդկանց հաճույքի համեմատ: Այնպես եղավ, որ իր ձին զարդարեց ոսկեզարդ ասպասարքով՝ թե թամբը, թե սանձը, թե կշտապանակը, թե ամբարձին (ասպանդակը), թե կրծքապանակը և ձիու այլ բոլոր սարվածքը ոսկի արեց: Նաև իր հանդերձանքը նույնպես գեղեցիկ ու թանկագին՝ ըստ թագավորական վայելչության: Եվ երբ երեների որսի էր ելնում, կամ զբոսանքի, այդպես զարդարված էր գնում:

(Մի անգամ) տեսավ, որ ամբողջ զորքը իրենց հանդերձանքը, ձիերի սարվածքը իր նման արին և քիչ-քիչ եղան շահի նման: Երբ

շահը տեսավ, թե բոլորը կերպավորվեցին իր նման, ասաց արքունի խնամակալին. Լալա, քեզ բան ունեմ ասելու, քանի որ տեսնում եմ իմ ամբողջ զորքը հագնում է ավելի թանկագին զգեստ, քան ես, իսկ նրանց երիվարների զարդերը ավելի թանկագին են, քան իմունը: Եվ արդ ի՞նչ բանով եմ մեծ նրանցից: Եթե անծանոթ մեկը գա մեր զորքի մեջ, ինչպե՞ս կճանաչի ինձ, թե ես շահն եմ, որովհետև ամեն մեկն ունի շահի կերպարանք, և ինձնից ոչ մի բանով պակաս չեն: Որովհետև եթե իմ անունը շահ է, նրանք կերպարանքով բոլորը շահ են: Եթե նրանց ասեմ՝ ինչո՞ւ եք ինձ նման հագնում, նրանք կհայհոյեն ինձ, թե ինքը մեզ հանդերձանք չի տալիս, և մենք ինքներս ենք գնում, նա նախանձում է մեր հագնելուն: Եվ արդ՝ Լալա, քեզ պատվիրում եմ, որ կանչես մուհետիկներին, որ շրջեն Սպահան քաղաքի մեջ և նրանց գոչեն՝ ասելով, թե շահի հրամանն է, եթե որևէ մեկը իր զգեստը և ձիու սարվածքը ոսկով չզարդարի, նրա գլուխը կկտրենք, ահա բոլորդ լսեք շահի խստագույն հրամանը»:

Երբ այս լսեցին, ով կարող էր, թե չէր կարող, շահի պատվերը կատարեցին անմիջապես: Իսկ ինքը շահը իր ձիու սարվածքը պատրաստեց խամ կաշուց, իսկ իր զգեստը այնպես, ինչպես սովորական մարդկանց զգեստն էր: Եվ այս հնարամտությամբ ամենքի սիրտը շահում էր և հաճոյանում բոլորին:

ԳԼՈՒԽ ԺԵ
ԱԹԱՅԻ ՏՈՒՆ ՇԱՀԻ ԱՅՑԵԼԵԼԸ

Կամենում եմ՝ այն, ինչ որ Շահ Աբասի ժամանակ կատարվել է, նկարագրել, բայց չեմ կարողանում, քանզի ժամանակը իմացողները քիչ են, որոնք ամեն բան ստույգ կերպով պատմում էին: Սակայն ինչ լսել եմ, այն եմ գրում: Այն ժամանակները, երբ շահը գնաց Վրաստան և հնազանդեցրեց նրանց և վերադառնալիս եկավ Կայանի ձորը[74], որ այժմ կոչվում է Ղրաղի ձոր, և ձմեռը կանգ առավ այնտեղ: Ըստ իր սովորության այստեղ ևս եկավ կերպարանափոխ. հագավ կաշուց տրեխներ և կերպավորվեց մանրավաճառի կերպարանքով: Շրջում էր գյուղերում, հարցնում, տեղեկանում և վերահասու էր լինում ամեն բանի: Այդպես գնալով հասավ մի